

## ՀԱՅ ՏԱՌԵՐԻ ԳՅՈՒՑԻ ԱՅՈՒՅԳ ԹՎԱԿԱՆԸ

Հայերեն տառերի դյուաւի թվականը համարվել է սովորաբար 404 թ. : Այս տեսակետի դեմ մի ցնցող հողված հրատարակեց Գ.Տ — Մկրտչյանը «Արարատ» ամսագրում, 1912 թ., էջ 499-514, որով հերքում է այդ թվականը և Հայերեն տառերի դյուաւը դնում է ուրից մինչև տասներկու տարի ավելի ուշ, 412-16 թվերին : Նա հիմնվում է Եղեւսիայի ասորաց եպիսկոպոս Ռարուլասի վրա : Այս նշանավոր մարդը դահակայեց 412 թվին : Եթէ Մեսրոպը Եղեւսիա դնալով ընդունվեց Ռարուլաս եպիսկոպոսից, այդ ընդունելութունը կամ հանդիպումը չէր կարող 412 թվեց առաջ լինել, բայց այդ կարող էր լինել նաև 412-ից հետո («Արարատ», էջ 509) : «Այդ թվականից առաջ, մեր ունեցած տեղեկութունների հիման վրա, անհնար է դնել մեսրոպյան տառերի դյուաւը : Թերևս այդ դյուաւը ասորական հետևյալ տարումն է (412 սեպտ.—413 սեպտ.), բայց հավանորեն ոչ դրանից ավելի ուշ» («Արարատ», էջ 513) : Չորս տարի էլ հաջվում է Մամոսատ դնալու, Հոռոփանոսին պնակիտը պատրաստել տալու և Առակաց գերբը թարգմանելու համար և վերջապես 416-ին վերադարձնում է Հայաստան :

Այսպիսով, ըստ Գարուստ Տեր-Մկրտչյանի, բուն մեսրոպյան դրերի դյուաւի թվականն է 412-416 ջառամյակը («Արարատ», էջ 513) : Այս 416 թվին է, որ Մեսրոպը վերադարձաւ Հայաստան :

Հակառակ Գ. Տեր-Մկրտչյանի հեթանոսական պատմաբանութուններով : Կարտաւի մեջ Բարիլասի անունը՝ հետոքի հարված է : Կորյունը՝ չնայած որ մի քանի անգամ առիթ է ունենում հիշելու այդ ե-

պիսկոպոսին, բայց միայն մի անգամ է տալիս նրա անունը. «Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն (որոց առաջնոյն Բարիլաս անուն և երկրորդին Ակակիոս), հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքին պատահեալ» (Կոր. էջ 19) : Մյուս դեպքերում տեսե՛ք՝ ինչ ձևերով է հիշում. «Եւ ապա հրատարեալ յեպիսկոպոսացն սրբոց» և... և հրատարեալ ի նոցանք հանդերձ ամենայն կարողքն, բերէր առ եպիսկոպոսն Ասարց : Որ յարցն նայոյնկալն եղև, առաջի արկեալ նոցա զնշանադիրսն աստուածատուր. վասն որոյ բազում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային» : Այս ըլլողը խուսափուկ ձևերը հետաքրքիր են, մանավանդ երրորդը, ճառ որոնցից որ առաջին անգամ ընդունվեց, նրանց ներկայացրեց դրերին :

Մենք արդեն ցույց ենք տվել, որ Կորյունի մեջ հետին հավելված է Մելիտինի Ակակիոս եպիսկոպոսի անվանումը : Այս խուսափուկ և տարօրինակ հիշատակութուններն էլ ցույց են տալիս, որ Կորյունը նույն եպիսկոպոսների անունը չափոտեր : Եվ եթև առաջին հիշատակութիւն մեջ էլ անկյունավոր փակադճի մեջ առնուված մասը հանենք, նախադասութիւններ ամենեւին չպիտի կադար :

Իր ասածը հաստատելու համար Գ. Տ.— Մկրտչյանը մի հնարագետ միջոցի էլ է դիմում : Կորյունը Դանիելյան նշանագրերը բերված է համարում Վրամշապուհի հիմնգեորդ տարին, փորձարկութիւն համար տալիս է երկու տարի, հետո Մեսրոպը մեկնում է Միջագետք Վրամշապուհի դարձյալ հիմնգեորդ տարում և վերադառնում է Վրամշապուհի վեցերորդ տարում : Գարուստ Տ.— Մկրտչյանն ասում է, որ այս

վեցերորդ ընթացվածը շատ հին է և դժվար է փոփոխել կամ ընթել: Այնուամենայնիվ ինքը փոխում է և վեցերորդը դարձնում է ԺԶ (16): Սրա համար էլ հիշում է մի ճառըսիր, ուր այս վեցերորդ բանից առաջ բաց տեղ է թողված, պահապելը անհնար է (Արարատ, էջ 511): Ենթադրենք, թե Կորյունի ընկերում բոլոր թվերը թվանշանով էին գրված և ոչ թե բառերով, որովհետև հակառակ պարագային կարելի չլիտի լիներ այնպիսի հեռուաթյամբ վեցերորդը վեշտասամերորդ դարձնել, ինչպես անում է Ձ—ԺԶ: Բայց ի՞նչ է անում Մեսրոպը Միջագետքում ամբողջ ինն տարի: Գ. Տ.—Մի կորյունի Գանիելյան գրերի: Հայաստան բերելը զնում է 406 թվին, Վուստչպուհի հիմնգերորդ տարին: Երկու տարի փորձ է կատարվում, դառնում է 407 Վուստչպուհի յոթներորդ տարին, երբ Մեսրոպը մեկնում է Միջագետք: Վերադառնում է Վուստչպուհի ԺԶ = 16-րդ տարին, այն է 416 թվին: 407-ից մինչև 416 ունենք ինն տարի, որից չորսը (412—416) զնում է Եղեգեայի և Սամոսատի աշխատանքների համար, իսկ մնացյալ

հինգ տարիները վրայից լուսթյամբ է անցնում:

Ահա թե ինչպիսի՛ լարերինթոսի մեջ է դրում Ռաբուլասի 412-ը. ահա թե ինչպե՛ս է կործանվում և այդ հիմքի վրա մեծ խնամքով կառուցված շինքը:

Մեր մի հողվածում, որը տպագրվել է ԱրմՖանի 1941 թվի տեղեկագրում (էջ 169-170), ցույց ենք տվել, որ Կորյունի Երզը պետք է կարդալ ոչ թե հիմնգերորդ, այլ ինչպես գրված է՝ երրորդ: Երկու տարվա փորձից հետո կունենանք հիմնգերորդ, ինչպես որ գրված է: Մեսրոպը մեկնում է Վուստչպուհի հիմնգերորդ տարում և վերադառնում է վեցերորդ տարում: Ուրեմն Միջագետքում մնում է մեկ տարի. և այսքանը բոլորովին բավական է մի գրադարան այցելելու, մի այբուբեն հնարելու, մի պնակիտ պատրաստելու և Առակաց գրքի նման մի փոքրիկ գիրք (որն ունի ընդամենը 60 էջ ութածալ) չորս հոգով (Մեսրոպ, Հովհան, Հովսեփ, Հոռոփանոս) Հայերենի թարգմանելու և գրի առնելու համար:

Ակադեմիկոս Է. ԱՄԱՌՅԱՆ